

DOI: <https://doi.org/10.58726/langlit-312-332>

Հանգուցային բառեր. շեշտի տեղաշարժ, իմաստատարբերակիչ շեշտ, հապավումների շեշտադրություն, ժխտական կազմությունների շեշտադրություն, ը ձայնավորի շեշտադրություն, երկշեշտություն

Հայ և օտարազգի լեզվաբանները բազմիցս անդրադարձել են հայերենի շեշտին. ուսումնասիրվել են նրա ծագումը, բնույթը, տեղը (դիրքը), տեսակները, ռճական և կիրառական նշանակությունները, արտասանական տեղաշարժերը, գրական հայերենի և բարբառների շեշտի փոխհարաբերությունները, նորմավորման և այլ հարցեր [5, 28]:

Ժամանակակից հայ լեզվաբանության մեջ ընդհանրական նորմով սահմանվում է, որ հայերենի շեշտը ուժային է, իմաստատարբերակիչ դեր չունի, կայուն-շարժական է և վերջնավանկային: Այն է՝ եթե բառակազմության կամ ձևակազմության **ժամանակ** բառի արտահայտության պլանում աջընթաց աճ է տեղի ունենում (նրանում ավելանում են նոր վանկեր), ապա շեշտը տեղափոխվում է աջ՝ ավելացած վերջնավանկի վրա: Այս դեպքում հայերենի շեշտադրման նորմին հակադրվում են՝ ա) ցուցակով ճշտվող մի շարք բառեր (ո՛ր երոդո, քանի՛ երոդո, նու՛յնպես, ո՛րևէ, ո՛վևէ, ու՛մնէ, նա՛մանավանդ, իհա՛րկէ, մի՛միայն, մի՛գուցէ, գրե՛թէ, մի՛թէ, ի՛նչևէ, ի՛նչևիցէ, ո՛վևիցէ)¹, բ) ը ձայնավորը բնաձայնություններում, եթե միակ ձայնավորն է (չը՛խկ, թը՛րիկ): Հավելենք

¹ Այս բառերի ցանկը տարբեր աշխատություններում տարբեր է սրանց երկակի արտասանության պատճառով (հմմտ. որպե՛սզի//որպեսզի՛, նա՛ն//նան՛, գո՛նե//գոնե՛, նու՛յնիսկ // նույնի՛սկ: Նշել ենք այն բառերը, որոնք նույնն են բոլոր ցանկերում):

նան, որ վերջնավանկի շ ձայնավորը, որպես կանոն, շեշտակիր չէ, ինչպես՝ քա՛րը, սի՛րոս:

Հոդվածում քննվում են այն դեպքերը, երբ շեշտը շեղվում է վերոբերյալ օրինաչափություններից. բերվում են օրինակներ, որոնք կա՛մ տեղ չեն գտել հարցին առնչվող աշխատություններում, կա՛մ լրացնում, ճշտում ու հավելում են այս կամ այն տեսակետը:

1.Շեշտի անկանոն դրսևորում բառակազմության ժամանակ

ա) Շեշտի աջ տեղաշարժ (տեղաշարժ առհասարակ) տեղի չի ունենում *-երորդ* ածանցով կազմություններում թե՛ դասական թվականներ կազմելիս (քսանմե՛կերորդ), թե՛ *որ, քանի* բաղադրիչներով դերանուններ կազմելիս (քանի՛ երորդ//քա՛նիերորդ, ո՛րերորդ):

բ) Շեշտը տեղափոխվում է ձախ հետևյալ կազմություններում՝ *միա՛յն > միմիայն՛, գուցե՛ > մի՛ գուցե, մա՛նավանդ > նա՛ մանավանդ՛:*

գ) Շեշտի ձախ տեղաշարժ է տեղի ունենում հարադրավոր բայեր կազմելու ժամանակ: Հայտնի է, որ հարադրավոր բայերը երբեմնի շարահյուսական լրացում-լրացյալ կապակցություններ են, որոնցում հարադիրը արտասանվել է ավելի շեշտված, իսկ բայը՝ անշեշտ կամ թույլ շեշտով. «*Եթե բառը իրեն առաջից ունի մի գորավոր շեշտով բառ, այսինքն այնպիսի բառ, որի քերականական շեշտի հետ միացած է և տրամաբանական գորացուցիչ շեշտը, այդ բառը նախընթաց բառի գորավոր շեշտի ազդեցության տակ թուլացնում է յուր շեշտը...կացավ-վե՛ր կացավ*» [1, 285]:

Իհարկե, կան բազմաթիվ հարադիր բայեր, որոնցում ոչ բայական բաղադրիչը անկախ կիրառություն չունի, ուստի և **լրացում-լրացյալ** հարաբերության մասին խոսք լինել չի կարող: Հարադիրը արտահայտում է չկոնկրետացված գործողության իմաստ, բայարմատ է և շարահյուսական որևէ պաշտոն չի ստանձնում, ինչպես՝ անց կենալ, թաք կենալ, կուլ գնալ, հուպ տալ, կոտր ընկնել, քարշ գալ և այլն:

Մեկ այլ խումբ են այն հարադիր բայերը, որոնց ոչ բայական բաղադրիչը թեև բայանուն չէ, բայց նույնպես անկախ կիրառություն չունի, ինչպես՝ թիկն տալ, ծառս լինել, կուչ գալ, տեղի տալ, տեղի ունենալ, երևան հանել և այլն:

Այս երկու խմբի բայերի համար բառային շեշտը ձևավորվում է ոչ թե փոխարկման (տրանսֆորմացիա) արդյունքում, այլ համաբանությամբ, այն է՝ հարադիր բայերում շեշտը կրում է ոչ բայական բաղադրիչը:

Շարահյուսական կապը մթագնելու հետևանքով նոր բառ կազմելիս բառային հիմնական շեշտը, հակառակ սպասվածի, պահպանվել է հարադիրի՝ ոչ բայական բաղադրիչի վրա (կացա՛վ-վե՛ր կացավ): Փաստորեն պետք է արձանագրել, որ տեղի է ունեցել շեշտի փոխարկում (տրանսֆորմացիա). տրամաբանական շեշտը վերածվել է բառային շեշտի: Սրան կարող էր նպաստել նաև այն հանգամանքը, որ բանավոր խոսքում շեշտ էին ստանում հրամայական եղանակի բայերին նախորդող անդամները:

Բայական հարադրությունների քանակը հազարների է հասնում: Դրանք կազմվում են բայական և ոչ բայական բաղադրիչներից, որոնց բաղադրիչների իմաստային ինքնուրույնության կորստի հետևանքով ավելի է սերտանում նրանց կապը, որը և նպաստում է բառական մեկ միավոր գիտակցվելուն: Այդ հատկանիշներին զուգակցվում է բաղադրիչներից մեկի (բայական բաղադրիչի) բառային շեշտի թուլացումը, քանի որ նոր ձևավորվող բառույթի գլխավոր շեշտի դերը իր վրա է վերցնում ոչ բայական բաղադրիչը [3, 94]: «Որպես այդպիսիք (բայական հարադրություն՝ ԱՍ, ՀՀ) պետք է ընդունել այն բաղադրությունները, որոնք լեզվի մեջ իմաստային միասնության տեսանկյունից ձեռք են բերել որոշ ավանդականություն, հիմնավորվել են պատմականորեն, և պարագայական կամ նման լրացուցիչ իմաստն այստեղ անջատ չի գիտակցվում, այն լուծվում է բայիմաստի մեջ: Նշանակում է՝ հարադրությունը ճանաչելիս անհրաժեշտաբար պետք է հաշվի առնել իմաստային-ֆունկցիոնալ և պատմական ավանդական գործոնները:

Նման դեպքերում այս գործոններով է բացատրվում նաև բառային շեշտի գործածությունը: Ժամանակավոր կապակցությունների մեջ կապակցության անդամները հանդես են գալիս անկախ բառական շեշտերով, իսկ հարադրության մեջ կա ընդհանուր իշխող շեշտ (որը դրվում է ոչ բայական բաղադրիչի վրա, իսկ բա-

յական բաղադրիչի շեշտը շատ թույլ է լինում, գրեթե չի զգացվում» [3, 185]:

2. Շեշտի անկանոն դրսևորում ձևակազմության ժամանակ

Շեշտը տեղափոխվում է դեպի ձախ հետևյալ դեպքերում:

ա) Բայի բաղադրյալ ժամանակաձևերի և հրամայական եղանակի ժխտականը կազմելիս օժանդակ բայը և արգելականի *մի* մասնիկը գալիս են դերբայից առաջ, և շեշտը տեղափոխվում է ձախ, ինչպես՝ *խոսու՛մ եմ > չե՛մ խոսում, խոսի՛ր > մի՛ խոսիր*:

Այսպես է նաև զուգաբայական հարադրությունների ժխտականի կազմության ժամանակ, ինչպես՝ *եփու՛մ-թափու՛մ է > չի՛ եփում-թափում, եփի՛ր-թափի՛ր > մի՛ եփիր-թափիր*:

Առհասարակ զուգաբայական հարադրություններն ունեն երկու կամ ավելի (նայած բաղադրիչների քանակին) շեշտ. յուրաքանչյուր բայ պահպանում է իր բառային շեշտը [17, 321]: Ընդ որում երկուսն էլ հիմնական շեշտեր են: Սրանով զուգաբայական հարադրությունները (ինչպես նաև կրկնավոր, հատվածական և բաղիյուսական բարդությունները) տարբերվում են, և դա արդեն անկանոն շեշտադրություն է, քանի որ բարդ բառի մեջ պահպանվում են մի քանի հիմնական շեշտեր, այլ ոչ թե հիմնական և երկրորդական:

Ժխտական խոնարհման ժամանակ շեշտի ձախ տեղափոխության արդյունքում նկատվում է ընդունված օրինաչափություններից երկու շեղում: Առաջին դեպքում երկու հիմնական շեշտերից մնում է մեկը, որը տեղափոխվում է ձախ (և ոչ աջ), իսկ բառային հիմնական շեշտերը վերածվում են երկրորդականի: Երկրորդ անկանոնությունն այն է, որ հիմնական շեշտը նախորդում է երկրորդականին. մինչդեռ օրինաչափության համաձայն երկրորդական շեշտը պիտի նախորդեր հիմնականին:

Պատկերն այլ է հարադրավոր բայերի ժխտական խոնարհման կազմության ժամանակ: Հայտնի է, որ հարադրավոր բայերում շեշտը կրում է ոչ բայական բաղադրիչը (ձե՛ք բերել), և որ շեշտը պահպանվում է դրական խոնարհման դեպքում, իսկ օժանդակ բայը դրվում է բայական բաղադրիչից առաջ: Մինչդեռ ժխտական խոնարհման ժամանակ օժանդակ բայը չի փոխում իր դիրքը, բայց

շեշտը տեղափոխվում է աջ՝ օժանդակ բայի վրա (*ձե՛նք է բերում՝ > ձեռք չի՛ բերում*):

Բաղադրյալ ստորոգյալների ժխտականի կազմության դեպքերում շեշտը ստորոգելիից տեղաշարժվում է հանգույցի վրա՝ *մա՛րդ է > մարդ չէ՛*: Իրավացիորեն նկատվել է, որ «ժխտական նախադասություններում հիմնական ինֆորմացիան կենտրոնանում է ժխտման շուրջ: Ժխտական մասնիկ ունեցող (*մի, չ*) և ժխտում արտահայտող բառերի (*ոչ, չէ, բոլորովին, երբեք* և այլն) հատվածում տեղափոխվում են ինչպես տրամաբանական շեշտը, այնպես էլ արտասանվածքի այն ամենաշեշտված մասերը, որոնք հնչերանգային պատկերում դրսևորվում են» [15, 55]:

Այս դիտարկումը ցույց է տալիս ժխտական մասնիկների կարևոր դերը շարակարգում: Ընդ որում դա տեղի է ունենում թե՛ ձևաբանական (*չե՛մ գա, մի՛ գրիր*), թե՛ շարահյուսական մակարդակներում (*մարդ չէ՛*). հմմտ. *ո՛չ բնական, ո՛չ հայկական*²: Ոչ ժխտական բաղադրիչի գերակա շեշտակրությունը դրսևորվում է նաև ժխտական դերանուններում՝ *ո՛չ մի, ո՛չ ոք, ո՛չ մեկը* (բայց *ոչի՛նչ*) [6, 336]:

Հատկանշական է, որ Լոռու խոսվածքում ժխտական մասնիկը, հակառակ սպասվածի, չի շեշտվում, ինչպես՝ *ա՛նես ոչ, ա՛նիլ մի* (բայց *կրակե՛ն է՛լ ո՛չ*):

Ժխտական ձևերի կազմությունները ամփոփելով՝ փաստենք, որ ժխտական մասնիկները գրական հայերենում, անկախ իրենց դիրքից՝ նախադաս կամ վերջադաս լինելուց, դառնում են արտասանվածքի կենտրոն և շեշտը կրում են իրենց վրա: Դա տեղի է ունենում և՛ ձևաբանական մակարդակում՝ ժխտական բայաձևեր (բառաձևեր) կազմելիս, և՛ շարահյուսական մակարդակում՝ ժխտական հարաբերություններ ձևավորելիս:

Ի տարբերություն գրական հայերենի՝ բարբառներում, ինչպես ասվեց, *ոչ* ետադաս ժխտական մասնիկը կարող է և չշեշտվել:

² Այս տեսակետից սպասելի էր նաև *ան, ապ* ժխտական նախածանցների շեշտակրությունը (*անբնական*, ապագային), սակայն դա տեղի չի ունենում:

բ) Շեշտը շարժվում է ձախ որակական ածականների համեմատության աստիճանները կազմելիս: Այսպես՝ բաղդատական աստիճանի *ավելի* մասնիկը համեմատաբար ուժեղ շեշտով է արտասանվում, ինչպես՝ *մեծ > ավելի՛ մեծ*:

Եթե գերադրական աստիճանը կազմվում է *ամենից, բոլորից* բառերով, շեշտը նույնպես տեղափոխվում է ձախ՝ սրանց վրա (որոնք, փաստորեն, բառահարաբերական ձևույթի արժեք են ստանում), ինչպես՝ *ամենի՛ց մեծ, բոլորի՛ց մեծ*³:

3. Ը ձայնավորի շեշտակրություն

Ըստ լեզվական նորմի՝ հայերենում շեշտ չի կրում նաև վերջին վանկի ը ձայնավորը գրությամբ արտահայտված լինելու թե չլինելու դեպքում (տու՛նը, գի՛րք(ը)ս):

Այս կանոնը բացառություն ունի. եթե ը-ն բառի (հաճախ շեշտվում է, որ այդ բառերը ձայնարկություններ են) միակ ձայնավորն է, գրվում է և շեշտ կրում (թը՛ իսկ, հը՛):

Սակայն, ինչպես ցույց են տալիս փաստերը, ը-ի շեշտադրությունը (նաև ուղղագրությունը) այս բառերով չի սահմանափակվում: Ձայնարկություններից բացի կան այլ բառեր ևս, որոնցում ը-ից տարբեր այլ ձայնավոր չկա: Ընդ որում, դրանք և՛ **հատուկ, և՛ հասարակ անուններ են: Օրինակ՝ Սարը (Եգիպտոսի պարսկաարաբական անվանումը) [18, 258], Քրք (անձնանուն) [5, 171], Նարը (արաբների ոստիկան) [12, 331], Խդդը (քրդական (եզդիական) անձնանուն), Կրրկ (կղզի Ադրիատիկ ծովում), Դզըլ (թրք. «կարմիր») բառով բազմաթիվ տեղանուններ (Դզըլ-Քիլիսա, Դզըլ-Դաշ, Դզըլ-Թամարի և այլն), Խըդը փաշա, Շըխ Հայդար [11, 38-453], դրդըզ [12, 331], դըռ (անջրդի վայր), սըր (տղամարդուն դիմելու ձև անգլերենում)**⁴:

³ Ըստ Ջ. Աղաջանյանի՝ համեմատության գերադրական աստիճանի *ամենա-* ցուցիչն ունեցող բառերում համեմատությունն ընդգծելու նպատակով հաճախ ուժգնորեն շեշտվում է առաջին ձայնավորը՝ *ամենա-ուշադի՛ր*, և այսպիսի շեշտադրությունն ունի ոճական նշանակություն [5, 146]:

⁴ Ըստ կանոնի՝ ը-ն բառասկզբում գրվում է *դ, մ, ն* բաղաձայններից առաջ, *ըստ* բառում, իսկ բառամիջում գրվում է, եթե առկա է նրանով

4. Շեշտի կորուստ և խոսքիմասային փոխանցում.

Հայերենի մի քանի վերաբերականներ առաջացել են բայերի (ընդ որում անկանոն բայերի) հրամայական եղանակի ձևերից, ինչպես՝ *թո՛ղ, արի՛, բե՛ր, տե՛ւ*: Եթե հրամայական բայերը արտասանվում են շեշտված (իսկ գրավոր խոսքում, որպես կանոն, գծանշվում են, պարտադիր շեշտ են կրում), ապա կորցնելով ուժեղ շեշտը՝ վերածվում են վերաբերականների՝ դառնալով անշեշտ բառեր թե՛ նախահար, թե՛ վերջահար դիրքերում⁵:

Այս բառերի նյութական իմաստի կողքին աստիճանաբար ձևավորվել է վերաբերմունքային իմաստ, իսկ դրան թերևս նպաստել է հենց շեշտի թուլացումը (կորուստը):

Այլ ձևակերպմամբ՝ շեշտի կորուստը (թուլացումը, թույլ արտասանությունը) կարող է հանգեցնել խոսքիմասային փոխանցման կամ բառիմաստի տարբերակման:

5. Շեշտի իմաստատարբերակիչ դերը

սկսվող արմատ կամ բառամաս: Ուստի և ուղղագրական շեղում է *ըհը, ըհ, ըհա* բառերում, *ը* տառանվան՝ *ըթ*, և սրանից կազմված *ըթացում* բառում, մի քանի հայկական ազգանուններում (հմմտ. Այտընյան, Չալըխյան, Գաթըրճյան), Բուլանըղ//Բուլանըխ (գավառ Արևմտյան Հայաստանում), Չալթըր//Չալդըր (Նոր Նախիջևանի գյուղերից), Հաջըն տեղանուններում, *ղը* (տիտղոս նշանակող մասնիկ) և *լը* (հող ֆրանսերենում) օտարալեզու մասնիկներում: Անմիօրինակություն է նկատվում օտար (հատկապես անգլերեն) անունները հայերենի փոխադրելիս՝ գրադարձելիս կամ հնչադարձելիս. գրադարձումը ենթադրում է բառի փոխադրումը ըստ գրության (Byron>Բայրոն), հնչադարձումը՝ ըստ արտասանության (Բայրըն): Ը-ի հնչադարձումը պարտադիր է բարբառային տեքստերը գրանցելիս: Ուղղագրական այս շեղումների կանդրադառնանք առանձին:

⁵ Լեզվաբանության մեջ տարածված այս բնորոշումը՝ անշեշտ բառ, վիճելի է, քանի որ բառի էական հատկանիշներից մեկը նրա արտասանական ամբողջականությունն է, որը ձևավորվում է հենց բառային շեշտի շնորհիվ՝ ապահովելով բառի գրո շրջապատը: Այնուամենայնիվ հետևելով հայ լեզվաբանության մեջ առկա ավանդույթին՝ գործածում ենք *շեշտազրկում* կամ *շեշտի կորուստ* տերմինները (այլ ոչ թե *շեշտի թուլացում*):

Ընդունված է ասել, որ հայերենի շեշտը իմաստատարբերակիչ դեր չունի: Ումանք իմաստատարբերակիչ դեր տեսնում են *քարե՛ր – քա՛ր էր, բացե՛ր – բա՛ց էր* ձևերում: Մինչդեռ նման դեպքերում գործ ունենք շեշտի սահմանագատիչ դերի հետ. նշված օրինակներում ընդգծվում է երկու բառերի սահմանը, իսկ շեշտի իմաստատարբերակիչ դերը պետք է տեսնել նույն բառի (բառաձևի) սահմանում, անկախ նրանից, թե բառը վերջնավանկային շեշտով է արտասանվում, վերջընթեր թե այլ (հմմտ. քա՛ղաքապետ, քաղա՛քապետ, քաղաքապե՛տ և ռուս. *за мо́к (դղյակ) և замо́к (կողպեք), воды՛ (ջրի), во́ды (ջրեր)*):

Չ.Աղաջանյանը իրավացիորեն շեշտի իմաստատարբերակիչ դեր է տեսնում *ըհը* բառի արտասանության ժամանակ. «ձևով ունի «այո» իմաստը, իսկ *ը՛հը* ձևով՝ «ահա» իմաստը» [5, 171]: Համաձայնելով հանդերձ՝ մի վերապահում անենք. «ահա, այսպիսով» իմաստի դեպքում բառն արտասանվում է կարծես երկու շեշտով, առաջին *ը*-ից հետո կարճ դադարով և երկրորդ *ը*-ի տևականությամբ: Այսինքն՝ բառիմաստը այնուամենայնիվ տարբերվում է ոչ թե հատկապես **միայն** շեշտով, այլ նաև հնչերանգային այլ դրսևորումներով:

Սրանից բացի մի շարք բառերի իմաստը նախադասության մեջ՝ շարահյուսական շրջապատում (բայց ոչ նախադասությունից դուրս, ինչպես ռուսերենում է), տարբերվում է հենց շեշտված կամ անշեշտ արտասանելով: Այսպես են իրարից տարբերվում՝

ա) *էլ* հավելական շաղկապը (անշեշտ) և *է՛լ* մակբայը (շեշտով): Օրինակ՝ Ես էլ չեմ գա // Ես է՛լ չեմ գա: Պիսիրը Հաբուդի աչքում է՛լ ավելի ընկավ (ԱԲ):

բ) *Մի* արգելական մասնիկը (շեշտված) *մի* վերաբերականից (անշեշտ): Օրինակ՝ Մի՛ լսիր նրան // Մի լսի՛ր նրան:

գ) *Մի* թվականը (շեշտված) *մի* անորոշ դերանունից (անշեշտ): Օրինակ՝ Մեր տուն մի՛ մարդ էր եկել // Մեր տուն մի մարդ էր եկել [21, 76]:

Շեշտի իմաստատարբերակիչ դերը կարող է դրսևորվել ոչ միայն համանուն բառերի շեշտակրությամբ, այլև նույն բառային կազմն ունեցող նախադասության մեջ տարբեր բառերի շեշտադ-

րությամբ: Ընդ որում հատկանշական է, որ դա տրամաբանական շեշտի հետ կապ չունի. շեշտված բառը ոչ թե մղվում է առաջին պլան և դառնում տեղեկույթի կենտրոն, այլ տարբեր շեշտադրությամբ նախադասությունները տարբեր իմաստ են արտահայտում: Հմնտ. հետևյալ նախադասությունները.

- 1) Դե դու գիտե՛ս:
- 2) Դե դու՛ գիտես:

Առաջին նախադասությունը նշանակում է «տեղյակ ես, իրագեկված ես», իսկ երկրորդ նախադասությունը ունի զիջական, համակերպման երանգ և նշանակում է «ինչպես կուզես, քո կամքն է»:

Գ. Գարեգինյանը կարճ մեջբերվող ուղղակի և անուղղակի խոսքերի տարբերակման հիմունք է առաջարկում հարցական դերանունների վրա շեշտ կամ հարցական նշան (պարույկ) դնելը: «Հաճախ գրավոր խոսքում, եթե տարբերակիչ կետադրական նշաններ առկա չեն, ուրիշի ուղղակի խոսքը կարող է շփոթվել գլխավորին շարահարությամբ ստորադասված ուղիղ խնդիր երկրորդականի հետ: ... Նման երկդիմություն կարող է առաջանալ նաև թե՛ շաղկապի գեղչման դեպքում, երբ հարցական բառերի վրա բացակայում են առոգանության նշանները: ... Երկդիմությունը կարելի է վերացնել առոգանության նշանների տարբերակված գործածությամբ: Եթե տվյալ նախադասությունը շարահարությամբ կապված ուղիղ խնդիր երկրորդական է, ապա անհրաժեշտ է նրա կազմում եղած հարցական բառի վրա շեշտ դնել, իսկ եթե ուղղակի խոսք է, ապա անհրաժեշտ է հարցական բառի վրա հարցական նշան դնել» [9, 393-394]:

Մասնագիտական գրականության մեջ առանձնացվում են այն բառերն ու բառախմբերը լեզվական միավորները, որոնք բանավոր խոսքում շարահյուսական շրջապատում առանձնանում են ուժգին հնչողությամբ, իսկ գրավոր խոսքում պարտադիր կրում են շեշտ (կամ առոգանության որևէ նշան՝ պարույկ կամ երկարացման նշան): Ընդ որում դրանք քննվում են նույն խմբում, չնայած կա՛մ ձևաբանական, կա՛մ շարահյուսական միավորներ են: Դրանք են՝ ա) հրամայական եղանակի թե՛ դրական, թե՛ ժխտական խոնարհ-

ման բայաձևերը⁶, բ) հարցական դերանունները, գ) մի շարք վերաբերականներ (այո՛ւ, ո՛չ, չէ՛, հա՛, մի՞ թե, չէ՞ որ, չլինի՞ թե, ինչպե՞ս չէ, ի՞նչ արած, ափսո՛ս), կրկնադիր շաղկապներ, ձայնարկություններ:

Շարահյուսական մակարդակում շեշտված արտասանությամբ (իսկ գրավոր խոսքում՝ համապատասխան կետադրությամբ) բնութագրվում է կոչականը:

Խոսքային իրավիճակով պայմանավորված՝ հրամայական եղանակի բայերի և կոչականի շեշտը կարող է տեղափոխվել ձախ: Բայց եթե կոչականի շեշտի տեղափոխությունը լրացումների կամ ձայնարկության վրա (սիրելի՛ Գոհար, ա՛յ տղա) ամրագրված է կանոնով, ապա հրամայական բայաձևերի շեշտի տեղաշարժը նախորդող բառի վրա, որպես կանոն, անտեսվել է: Մինչդեռ վաղուց է նկատված, որ «Կոչականն ու հրամայականը կը բթին՝ երբ նախընթաց շեշտեալ բառ մ'ունին՝ որ իրենց վերադիրն է» [7, 363]:

Գ. Գարեգինյանը գրում է, որ նախադաս լրացում ունենալու դեպքում շեշտը դրվում է ոչ թե ստորոգյալի, այլ նրա նախադաս լրացման վրա (ընդգ.՝ ԱՍ, ՀՀ), և դա պայմանավորում է տրամաբանական շեշտով [9, 421]: Մինչդեռ *Մի մոմ էլ դո՛ւ կպցրու Անհաղթի գերեզմանին* նախադասության մեջ շեշտվում է հրամայական բային նախորդող բառը, որը ոչ թե լրացում է, այլ ենթակա: Այսինքն՝ կարևոր չէ նախորդող բառի լրացում լինելը, կարևոր է հենց այն, որ շեշտակիր է դառնում հրամայական բային նախորդող բառը՝ անկախ շարահյուսական պաշտոնից:

Հր. Աճառյանը, սակայն, կարծում է, որ «նախադասության մեջ ստորադաս կամ երկրորդական արժեք ունեցող բառերը ավելի թույլ շեշտ են ստանում, քան իրենց գերադաս, այսինքն՝ ավելի կարևոր բառերը: Այսպես, ածականը իր գոյականից ստորադաս է, սեռա-

⁶ Ս. Աբրահամյանը քննադատում է այս մոտեցումները: «Արդի հայերենի կետադրության թերություններից մեկը մի շարք դեպքերում ձևաբանական գործոնին առաջնություն տալն է շարահյուսականի, խոսքայինի համեմատությամբ: Այսպիսի դեպքերից է, օրինակ, հրամայական բայաձևերի, կրկնադիր շաղկապների պարտադիր շեշտադրության պահանջը, որը մինչև այժմ տեղ է գտնում որոշ գրքերում և կետադրության պրակտիկայում» [4, 11]:

կանը իր հատկացյալից ստորադաս է, մակբայ, շաղկապ, նախադրություն ավելի ստորադաս են, քան մյուս բառերը և այլն» [6, 322]:

6. Երկշեշտություն

Հայերենում երկու շեշտով բնորոշվում են հարադրական (կրկնավոր, հատվածական, բաղիյուսական) բարդությունները: Ընդ որում շեշտերից մեկը համարվում է հիմնական, մյուսը՝ երկրորդական: Ինչպես ասվեց, զուգաբայական հարադրությունների շեշտը քննելիս անկանոնություն պետք է դիտել ոչ միայն մի քանի շեշտը, այլև այն դեպքերը, երբ երկրորդական շեշտը նախորդում է հիմնական շեշտին:

Այդպիսին է (անկանոն) հարադրավոր բարդությունների բառային շեշտը, որն ընկնում է ոչ բայական բաղադրիչի՝ հարադրի վրա և նախորդում երկրորդական շեշտին, որն ընկնում է բայական բաղադրիչի վրա, ինչպես՝ *ձե՛նք բերե՛լ*:

Կրկնավոր բարդություններում նույնպես նկատելի են շեշտադրման շեղումներ: Այսպես՝ որոշ հարադրություններ ներկայացվում են առաջին բաղադրիչի շեշտադրությամբ, ինչպես՝ *օ՛ր օրի* [8, 50], [5, 177]: Այս շեշտադրությունն արդեն անկանոնություն է, քանի որ բարդ բառի ձևավորմամբ հանդերձ՝ շեշտի տեղաշարժ բառավերջ տեղի չի ունեցել:

Նշվեց, որ երկու հիմնական շեշտ ունենալն արդեն իսկ հայերենի համար անկանոնություն պետք է դիտել (տե՛ս զուգաբայական հարադրությունների շեշտը): Նման երկշեշտությամբ բնորոշվում են նաև կրկնավոր բարդությունները, ինչպես՝ *տու՛ր հա տու՛ր, բե՛ր հա բե՛ր* [10, 108]:

Ա. Մուրվալյանը նման բարդություններում շեշտը դնում է *հա* բաղադրիչի վրա՝ *փրշտ- հա՛ - փրշտ* «շտապով, երկյուղից շտապելով», ինչպես նաև՝ *գա հա՛ գա, տուր հա՛ տուր* [13, 152]: Նման շեշտադրությունը, որը, ինչ խոսք, հնացած է, նույնպես պիտի անկանոն համարել. նախ՝ շեշտը դրվում է վերջընթեր վանկի վրա, երկրորդ՝ չեն շեշտվում հրամայական եղանակի բայերը (վերջին երկու օրինակում):

Երկու շեշտ են կրում ինչպես կրկնավոր ձայնարկությունները, ինչպես՝ *վա շ-վի շ, տաշի՛ -տուշի՛, հա յ-հա յ, հա յ-հու յ*, այնպես էլ

տարբեր բառերով ձևավորված բաղադրյալ ձայնարկությունները, ինչպես՝ *պա՛հո՛, տո՛բա՛, հա՛յ հարա՛յ, բա՛ տո՛, է հե՛ հե՛ յ*:

7. Տառային հապավումների շեշտը

Շեշտին վերաբերող աշխատություններում առհասարակ չի խոսվում տառային հապավումների շեշտի մասին (հապավումների շեշտի մասին ընդհանրապես): Մինչդեռ հապավումները՝ որպես **բառեր**, պետք է ունենան իրենց շեշտը և ենթարկվեն հայերենի արտասանական և շեշտադրության կանոններին:

Առանձնակի է այն տառային հապավումների շեշտադրությունը, որոնք վերածվել են հասարակ գոյականների և գրվում են փոքրատառով, ինչպես՝ *բուհ, ջեկ, հեկ, աեկ, նեպ, զազու, սպիղ, դօտ, դզօտ, բումժ*⁷:

Եթե տառային հապավումն ունի մեկ ձայնավոր, որը գտնվում է բաղաձայնների միջև և հապավման առաջին կամ վերջին բաղադրիչը չէ, հապավումն արտասանվում է և շեշտ է կրում սովորական միավանկ բառի համաբանությամբ, և տառանվանումների⁸ ը-ն չի արտասանվում, ինչպես՝ *ՊԱՊ, ՀՕՊ, ՀԱՄԽ*:

Եթե հապավումն ունի բաղաձայնով ընդմիջվող մի քանի ձայնավոր, ապա դրանք վանկ են կազմում, արտասանվում և շեշտադրվում են բազմավանկ բառերի համաբանությամբ, ինչպես՝ *ՖԻՖԱ, ՆԱՏՕ, ՅՈՒՆԵՄԿՕ, ՄԽԱՏ*⁹:

⁷ Արժանահիշատակ է վերջին երեք բառերի ուղղագրությունը: Դրանք ռուսերենից փոխառյալ հապավումներ են. դօտ (<долговременная огневая точка>), դզօտ (<дерево-земляная огневая точка>), բումժ (<без определённого места жительства>), բայց վերջինը գրվում է *n*-ով (փոխանակ *o*-ով): Երևույթը թերևս կարելի է բացատրել նրանով, որ հայերենում դրա հապավում լինելը չի գիտակցվում:

⁸ **Տառանվանում**-ը գործածում ենք՝ ընդգծելու այբուբենի տառերի՝ արևելահայերենում ընդունված *ա, բը, գը, դը...* արտասանությունը՝ ի տարբերություն **տառանուն**-ի, որով ցույց է տրվում մեսրոպյան այբուբենի տառերի անունները՝ *այբ, բեն, գիւ, դա*:

⁹ Կան վերջընթեր վանկի շեշտադրությամբ հապավումներ՝ ՆԱ՛ՏՕ, ՅՈՒՆԵՄԿՕ, և դա պայմանավորված է փոխատու լեզվի շեշտադրությամբ:

Եթե հապավման ձայնավորը առաջին (ԱՄՆ, ԱԱԾ, ՈՒԳԸ, ԳԱԱ) կամ վերջին բաղադրիչն է, կամ հապավումը ձայնավոր բաղադրիչ չունի, հապավման բաղադրիչներն արտասանվում են առանձին-առանձին (ոչ որպես մեկ հնչաբառ), տառանվանումով, յուրաքանչյուր բաղադրիչ ունենում է իր շեշտը, և առաջանում է հայերենի համար անսովոր (անկանոն) վիճակ. բառը ունենում է մի քանի շեշտ (կախված բաղադրիչների քանակից), և շեշտակիր կարող է դառնալ չգրվող, բայց լսվող *p* ձայնավորը, օրինակ՝ ԱԳըԼըՃըԿը, ՎըՊըՀը, ՀըԹըԸ:

Արևմտահայերենում հապավումներն արտասանվում են տառանուններով, ուստի և ո՛չ արտասանության, ոչ՝ շեշտադրման դժվարություններ չեն առաջանում, հմմտ. *ՀՅԴ*¹⁰ (*հոհիդա*), *ՀՄԸՄ* (*հոմենթթմեն*), *ԿԿ* (*կենկեն*):

Արտասանական (և ուղղագրական¹¹) մյուս դժվարությունը առնչվում է համեմատաբար վերջերս տարածված օտարալեզու տառային հապավումներին, որոնք արտասանվում են օտար լեզվի տառանուններով, ինչպես՝ *Բի-Բի-Սի*, *Սի-Էն-Էն*, *Էյչ-Էս-Բի-Սի* և այլն: Այս բառերի յուրաքանչյուր բաղադրիչ արտասանվում է առանձին շեշտով, այսինքն՝ սրանք նույնպես բազմաշեշտ բառեր են¹²:

¹⁰ Արևելահայերենում պահպանվում է հապավման ավանդական ձևը (փխնկ. ՀՀԴ):

¹¹ Սրանք, ի տարբերություն մյուս տառային հապավումների, գրվում են գծիկներով:

¹² Սրանք անգլալեզու հապավումներ են, տառադարձվել են անգլերենի տառանուններով (փոխառվել է օտարալեզու արտասանությունը), և ձևավորվել է ուրույն, մյուս հապավումներից տարբեր ուղղագրություն: Խորհրդային տարիներին գործածվող օտարալեզու հապավումների վրա այս դրույթը (տառանուններով փոխադրելը) չէր կարող տարածվել, քանի որ դրանք ռուսերենով միջնորդավորված էին. հմմտ. փոխառություններն ոչ միայն անգլերենից, այլև գերմաներենից, ֆրանսերենից և այլն, օրինակ՝ ՆԱՏՕ (անգլ.՝ North Atlantic Treaty Organization), ՕԱՍ (ֆր.՝ Organisation de l'Armee Secret «Ֆրանսիական զինված զադոսնի ընկերություն»), ԴՊԱ (գերմ.՝ Deutsche Presse Agentur):

Օտարալեզու հապավումների՝ փոխատու լեզվի արտասանության օրինաչափություններով փոխառությունը հայերենի համար նորություն չէ: Այդպիսիք են էսեռ (СР=социал-революционер «սոցիալ-հեղափոխական»), կադետ (КД=конституционный демократ «կոնստիտուցիոն դեմոկրատ») հապավումները: Մրանք՝ որպես հասարակ գոյականներ, հիմք են դարձել նաև այլ կազմությունների (էսեռական, էսեռականություն, էսեռացող (ենթադրվող **էսեռանալ* բայը բառարանում չկար), էսեռություն, կադետական, կադետականություն, կադետային):

Հատկանշական է ՍՍ հապավումը (գերմ.՝ Schutzstaffel «հիտլերյան ֆաշիստական Գերմանիայի հատուկ նշանակության զորամաս»): Այն գերմաներեն հապավում է, որը փոխառվել է ռուսերենի միջոցով և ռուսերեն արտասանությամբ՝ էսէս: Այս հապավումը ածանցվելիս և հոլովվելիս դառնում է վանկային հապավում, ինչպես՝ էսէսի, էսէսական և այլն [14, 135]:

8. Տրամաբանական շեշտ

Բացի բառային շեշտից՝ հայերենին հատուկ է նաև տրամաբանական շեշտը, որով նախադասության որևէ բառը հատուկ երանգով և բառային շեշտի առավել ուժգնությամբ է արտասանվում՝ իմաստային երանգավորում հաղորդելով նախադասությանը:

Ս. Աբրահամյանը տրամաբանական շեշտը կապում է հնչերանգի ըմբռնման հետ՝ գտնելով, որ այն հնչերանգի ամենաբարձր տոնն է մնացած ելևէջների համեմատությամբ: Ընդ որում հեղինակը տրամաբանական շեշտ է տեսնում բոլոր տիպի նախադասություններում:

Եթե մի կողմ թողնենք այն բառերը, որոնք գրեթե միշտ շեշտված են հանդես գալիս (դրանց մասին նշվեց, ապա տրամաբանական շեշտով հնչաշղթայում կարող է առանձնանալ ոչ միայն ցանկացած **բառ**, այլև ցանկացած լեզվական միավոր՝ **վանկ, ձևույթ, անշեշտ** բառ: Ուստի և հնչաշղթայում բառային շեշտից ցանկացած շեղում պետք է դիտել անկանոնություն:

Անկանոնություն է դրսևորվում, երբ միջբառային դադարը վերածվում է կցույթի [20, 38] և բառային ու շարույթային շեշտերը

չեն համընկնում: Դա մասնավորապես լինում է այն ժամանակ, երբ բաղաձայնով վերջացող բառը հաջորդ բառի՝ ձայնավորով սկսելու պատճառով ստանում է *ն* հոդ, ինչպես՝ **Հակորն ընկավ** (**Հակորնընկավ**), բաղաձայնով վերջացող բառին հաջորդում է *եմ* օժանդակ բայը, *էլ* շաղկապը կամ *իսկ* վերաբերականը, ինչպես՝ *Լիլիթն է եկել* (*Լիլիթնէ յեկել*), *Հասմիկն էլ կասի* (*Հասմիկնէլ կասի*), *Արամն իսկ գիտի* (*Արամնիսկ գիտի*)¹³:

Պետք է առանձնակի ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքին. եթե ա) կետում նշված դեպքերում բաղաձայնով վերջացող բառը, անկախ շարահյուսական շրջապատից՝ հաջորդ բառից, կարող է նաև **ը** հոդ ստանալ (**Հակորըր ընկավ**), ապա բ) կետում նշված դեպքում (*եմ* բայից, *էլ* շաղկապից, *իսկ* վերաբերականից առաջ) **ը** հոդ ստանալ չի կարող: Այսինքն՝ բաղաձայնահանգ բառերի՝ օրինակափորեն **ը** ստանալը խաթարվում է շարահյուսական շրջապատով. պարտադիր է մի տարբերակ միայն. **ը** հոդով զուգաձև չկա:

Այլ ձևակերպմամբ՝ եթե երկու (գուցե և ավելի) շեշտակիր բառեր միավորվում են մեկ հնչաբառի (հնչադասության) մեջ, նրանցից մեկը կորցնում է բառային շեշտը:

2) Տրամաբանական շեշտով կարող է ընդգծվել վանկ (արտասանվածքի նվազագույն միավորը) կամ որևէ բառամաս և չհամընկնել բառային շեշտին, օրինակ՝ *Ոչ թե պա՛միդոր, այլ պո՛միդոր: Ոչ թե մոտեցի՛, այլ մոտեցի՛ր* (*մոտեցի՛* բառաձև չկա. շեշտը համաբանությամբ դնելով վերջին վանկի վրա՝ ընդգծվում է բառաձևի սխալը): Ես չասացի չը՛ գաս, ես ասացի կը՛ գաս: Նե՛րջնչում է և ո՛չ թե արտա՛ջնչում:

«Հայերենի մեջ,– գրում է Հր. Աճառյանը,– այս երևույթը հասնում է մինչև տառերի կամ ձայների վրա ուշադրություն դարձնելու աստիճանի: Օրինակ՝ Ա՛պարան թե՞ կապարան: Արա՛րան չէ,

¹³ Սպասելի էր, որ նույնը վերաբերեր նաև *անգամ* սաստկական վերաբերականին, բայց նրանից առաջ բառը կարող է ստանալ *և՛* **ը**, *և՛* *ն* հոդեր: Հմմտ. *Արամը անգամ* // *Արամն անգամ*:

Ապա՛րան:

Առաջինի մեջ խնդիրը **ա** թե **կա** արտասանելու մասին է, ուստի այդ վանկերն են շեշտված, երկրորդի մեջ՝ **բա** թե **պա** արտասանելու մասին, ուստի և այդ վանկերն են շեշտված» [6, 321]:

Տրամաբանական շեշտի այս նշանակությունները հատկապես նկատելի են ու կարևոր հակադրությամբ կազմված կառույցներում:

գ) Եվ, վերջապես, շեշտադրման անկանոնություն պետք է տեսնել այն դեպքերում, երբ նախադասության մեջ տրամաբանական շեշտ են առնում անշեշտ բառերը՝ նախահար թե՛ վերջահար¹⁴:

Անշեշտ են կապերը (թե՛ նախադրությունները՝ **ի, ըստ, ընդ, առ, առանց** և այլն, թե՛ ետադրությունները՝ **մոտ, դեմ, մեջ**), թարմատարները (**ինչպես թե, երբ որ**), մի շարք վերաբերականներ, **եմ** օժանդակ բայը (դրական խոնարհման ժամանակ), շաղկապները (բացի կրկնադիր համադասականներից), **պիտի** եղանակիչը¹⁵, բաղադրյալ ստորոգյալի հանգույցը դրական խոնարհման դեպքում:

Հատկապես բանաստեղծական խոսքում չափ պահելու նպատակով [19, 78-80] անշեշտ բառերը կարող են շեշտվել, և կառաջանա մի յուրահատուկ իրավիճակ. ձևաբանական կամ շարահյուսական նորմով սրանց շեշտադրությունը կլինի անկանոն, սակայն կանոնավոր՝ ըստ տաղաչափական նորմի: Համեմատենք հետևյալ դեպքերը, երբ շեշտված են՝

ա) ստորադասական շաղկապը.

1. Կշպրտենք-անթիվ տանկերո՛վ էլ գան **թե՛** (ԵՉ):
2. Բայց եղել են լոկ վկա անտարբեր
Եվ կարծել են, **թե** ես վաղուց չկամ (ԵՉ)

¹⁴ Հնչաբառի դեպքում հիմք է ծառայում շեշտակրությունը. այս պայմաններում անշեշտ բառերը, լինեն դրանք նախահար (պրոկլիկտիկ), թե՛ վերջահար (էնկլիկտիկ), միանում են շեշտակիր բառերին և կազմում մեկ հնչաբառ [19, 90-91]:

¹⁵ *Պետք է* եղանակիչը համեմատաբար շեշտված երանգ ունի [5, 155]:

բ) նախադրություն կապը.

Որպես բախտիս մութ քամահրանքը, կամ որպես
Մի հին խոստում, որ անկատար, դրժած թողի (ԵՉ):

գ) ետադրություն կապը.

Իր բանվոր հոր հետ միասին
Գործարան էր գնում նա երբեմն:
Կամ հավաքած իր քաջ ընկերներին դրսի
Նա խաղում էր «Կոիվ բուրժույի դես» (ԵՉ):

դ) թարմատարը.

Եվ նա տեսավ, տեսավ, թե ինչպես հոր
Աչքերը հուր դարձան հետզհետե,
Լուսարձակներ երկու դարձան ոնց ըը
Ոնց որ ռումբեր, որ նա պիտի էգուց նետե (ԵՉ):

Խոսքում շեշտակիր միավորների անջատումը սերտորեն կապվում է արտասանվածքի հատույթավորմանը [15, 173]:

Նկատենք սակայն, որ շարույթի սահմանները և շարույթային շեշտը որոշելը շատ սուբյեկտիվ է, քանի որ փորձառական հնյունաբանության մեջ օգտվում են ոչ միայն գործիքների ընձեռած հնարավորություններից, այլև մեծ չափով լսողական սարքերից [15, 42], [13, 171-206]:

«Որոշ դադարներով ձայնագրված նախադասությունները ***փորձարկվողը հնարավորություն էր ստանում լսել մի քանի անգամ, մինչև որոշում էր շարույթների տեղն ու քանակը:*** Լսողական վերլուծությանը մասնակցել են բանասիրական ֆակուլտետների բարձր կուրսերի ուսանողներ: Բոլոր փորձարկվողներին էլ (մասնակի տարբերություններով) ***հիմնականում*** ճիշտ են նշել շարույթների սահմանները [15, 179, 182-185]»:

Ուստի և մենք գերծ կմնանք շարույթային շեշտին անդրադառնալուց, հատկապես որ «միշտ չէ, որ շարույթի վերջին վանկը շարույթային շեշտի կրողն է» [15, 182], նրանում կարող է ցայտուն արտահայտություն ստանալ բառային շեշտը, մինչդեռ նույն շարույթում կարող է լինել այլ շարույթային շեշտ, «շարույթային

շեշտը կարող է ընկնել նույն շարույթի մեջ մտնող տարբեր բառերի վրա» [15, 183]:

Այսպիսով կարող ենք արձանագրել, որ ինչպես լեզվական ցանկացած նորմ, այնպես էլ շեշտադրման նորմը բնութագրվում է հակահամակարգային տարատիպ դրսևորումներով (անկանոնություններով), որոնք ձևավորվում և զարգանում են կիրարկման (ուզուսի) մակարդակում և լեզվական նորմի բեկմամբ պայմանավորված՝ տեղ են գտնում նաև նրա կառուցվածքում՝ դառնալով այդ իսկ կառուցվածքի կանոնիկ դրսևորում:

DOI: <https://doi.org/10.58726/langlit-312-332>

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբեղյան Մ, Երկեր, հ. Ը, Երևան, 1985:
2. Աբրահամյան Ս., Ժամանակակից գրական հայերեն, Երևան, 1981:
3. Աբրահամյան Ս., Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962:
4. Աբրահամյան Ս., Հայերենի կետադրություն. Երևան, 2002:
5. Աղաջանյան Զ., Շեշտը և շեշտադրության նորմավորման հարցերը հայերենում, Երևան, «Նաիրի», 2019:
6. Աճառյան Հր., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. VI, Երևան, 1971:
7. Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987:
8. Ավետիսյան Յու. և այլք, Հայոց լեզու և խոսքի մշակույթ, Երևան, 2016:
9. Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Երևան, 1991:
10. Գյուրջինյան Դ., Հայերեն բառարան տեղեկատու. միասին, անջատ կամ գծիկով գրվող բառեր, Երևան, 2006:

11. Դավրիժեցի Առ., Պատմություն, Երևան, 1988:
12. Դրասխանակերտցի Հովհ., Հայոց պատմություն, Երևան, 1966:
13. Թոխմախյան Մ., Հայերենի շարությային շեշտը, Երևան, 1978:
14. Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում, Երևան, 1973:
15. Հնչերանգը և շեշտը ժամանակակից հայերենում, Երևան, 1978:
16. Մուրվալյան Ա., Հայոց լեզվի բառային կազմը, Երևան, 1955:
17. Մարգարյան Ալ., Հայերենի հարադիր բայերը, Երևան, 1966:
18. Պապոյան Ա., Հայագիտական հետազոտություններ, Երևան, 2007:
19. Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Երևան, 1974:
20. Ջահուկյան Գ., Հայերենի կետադրության պատմական և տեսական հիմունքները, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1990, N7:
21. Սանթոյան Ա., Արդի հայերենի կետադրության համակարգը, Երևան, 2004:

ИРРЕГУЛЯРНОЕ УДАРЕНИЕ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

*Арен Сантоян
Асмик Арутюнян*

Резюме

Ключевые слова: сдвиг ударения, смысловозначительное ударение, ударение в аббревиатурах, ударение в отрицательных образованиях, ударение на гласном «ր» [ə], двойное ударение

В современной армянской лингвистике ударение обычно описывается как сильное, не дифференцирующее значения, устойчивое и подвижное, и, как правило, ставится на последний слог. Однако это правило часто нарушается различными языковыми выражениями, которые зачастую либо не учитываются в существующих исследованиях, либо служат для дополнения, уточнения или расширения различных точек зрения.

В данной статье рассматриваются случаи, когда ударение расходится с вышеупомянутыми устоявшимися нормами, и выявляются следующие нерегулярные типы:

1. Иррегулярное ударение в словообразовании,
2. Иррегулярное ударение в грамматических склонениях,
3. Особенности ударения гласного «ր»,
4. Иррегулярное ударение при потере ударения и сдвигах по частям речи,
5. Иррегулярное ударение, обусловленные смысловозначительной ролью ударения,
6. Двойное ударение,
7. Особенности ударения в аббревиатурах,
8. Особенности логического ударения.

IRREGULAR STRESS IN ARMENIAN

Aren Santoyan

Hasmik Harutyunyan

Summary

Key words: *stress shift, meaning-differentiating stress, stress in abbreviations, stress in negative formations, stress on the vowel “ը” [ə], double stress*

In modern Armenian linguistics, stress is generally described as strong, non-meaning-differentiating, stable-mobile, and typically placed on the final syllable. However, this rule is frequently disrupted by various linguistic expressions, which are often either overlooked in existing research or serve to complement, clarify, or expand upon different perspectives.

This article explores cases where stress diverges from the aforementioned established norms, identifying the following irregular patterns:

1. Unconventional stress patterns in word formation;
2. Irregular accentuation in grammatical inflections;
3. Stress characteristics of the vowel “ը”;
4. Stress anomalies in accent loss and part-of-speech shifts;
5. Stress anomalies caused by the meaning-differentiating role of stress;
6. Double accentuation;
7. Stress patterns in abbreviations;
8. Characteristics of logical stress.